ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ «Սահմանադրություն») 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորը, Ազգային ժողովի խմբակցությունը և Կառավարությունը:* Այսինքն, մայր օրենքը տարբերում է օրենսդրական նախաձեռնության 3 սուբյեկտ՝

- Ազգային ժողովի անհատ պատգամավոր,
- Ազգային ժողովի խմբակցություն,
- Կառավարություն:

Ըստ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 10-րդ հոդվածի 12-րդ մասի՝ *եթե վարչապետը գտնում է, որ Կառավարության նիստի օրակարգ ընդգրկելու համար առաջարկվող որևէ հարցի քննարկման անհրաժեշտություն չկա, ապա օրակարգի նախագիծը Կառավարության անդամներին ուղարկելիս նշվում է այդ մասին: Տվյալ հարցը Կառավարության նիստում քվեարկվում է առանց քննարկման և զեկուցման, եթե Կառավարության անդամներից որևէ մեկը Կառավարության նիստում դրան չի առարկում: Առարկելու դեպքում հարցը քննարկվում է ընդհանուր կարգով:*

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» 2018թ. մարտի 23-ի օրենքն ինքնին միտված է եղել սուպերվարչապետական համակարգի արմատավորմանը, և քննարկման առարկա հոդվածն ընդգրկվել է դրա նախնական տեքստում[1] ու այդպես էլ փոփոխության չի ենթարկվել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2019թ. մայիսի 08-ի օրենքով:

Այսպիսով, Օրենքը տարբերակում չի դնում Կառավարության նիստում քննարկվող որևէ հարցի մասով. օրակարգի ցանկացած հարց Կառավարության նիստում կարող է քվեարկվել՝ առանց դրա շուրջ ըստ էության քննարկում ծավալելու: Այսինքն, գործադիր իշխանության ղեկավարը կարող է որոշել, որ Կառավարության նիստում օրենսդիր իշխանության ներկայացուցիչների կողմից մշակված օրենքների նախագծերը քննարկելու անհրաժեշտություն չկա՝ այդպիսով սահմանափակելով և նսեմացնելով Սահմանադրությամբ այդ սուբյեկտներին տրված լիազորությունը:

Այստեղ տեղին է նաև հիշատակել, որ օրենքի մակարդակով կարգավորվում են հասարակական կյանքի ամենաէական ասպեկտները: Այսպիսով, եթե որևէ

---

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120915

հարաբերության կարգավորումը տրված է օրենսդրական մակարդակով, ապա այն ունի այլ հարաբերությունների համեմատ ավելի մեծ կարևորություն:

Հետևաբար, օրենքների նախագծերը Կառավարության նիստում առանց մանրամասն քննարկելու՝ փաստացի կառավարական կոմիտեի նիստում տեղի ունեցած քննարկման արդյունքները հաստատելն անընդունելի կարգավորում է:

Սույն նախագծով առաջարկվում է այդ բացը շտկել:

Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ Օրենքի 12-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ առանց քննարկման և զեկուցման քվեարկության կարգը չի կարող կիրառվել Ազգային ժողովի պատգամավորի կամ խմբակցության կողմից ներկայացված օրենքի նախագծի նկատմամբ (Կառավարության օրենսդրական նախաձեռնությունների մասով չի առաջարկվում կատարել փոփոխություն, քանի որ տրամաբանական է, որ Կառավարությունն իր նախագծերի շուրջ, մինչ դրանք նիստի օրակարգում ընդգրկելը, արդեն իսկ ծավալել է համապատասխան քննարկում. ամեն դեպքում, Կառավարության լիազորությունն է մնում իր կողմից մշակված նախագիծը քվեարկության դնելն առանց քննարկման կամ քննարկումից հետո):

Այսինքն՝ Ազգային ժողովի պատգամավորի կամ խմբակցության կողմից ներկայացված օրենքի նախագիծը Կառավարության նիստում պարտադիր քննարկման ենթակա պետք է լինի: